

Վևորգ Ս. Ստեփանյան*
դասմ. գիտ. թեկնածու

ԸՆԳԳԵՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԳՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂՃԱՐԱՐՆԵՐԻ

Գեռևս խորհրդային շրջանում աղբրեջանական պատմագրությունը աղբրեջան-ցիների էթնոժազումնաբանության խնդիրներին վերաբերող երեք իրարամերժ վարկածներից (թյուրքական, իրանական, աղվանական) ակտիվացրեց աղվանական ուղղությամբ¹ առաջ քաշվող հակազիտական տեսությունների քարոզչությունը՝ փորձելով իրենց նախնիները համարել երկրամասի տեղաբնիկ՝ քրիստոնյա-աղվանական ցեղերին: Այս ուղղությամբ մշակված «հայեցակարգերը» դրվեցին սեփական ժողովրդի էթնոգենեզի վերաբերյալ աղբրեջանցի մի շարք հեղինակների (Ա. Ալեքսանդրով², Չ. Բունիաթով³, Ֆ. Մամեդով⁴, Ս. Մամեդով⁵, Ռ. Գեյուշև⁶, Ռ. Մելիքով⁷, Ա. Սումբատզադե⁸, Ա. Ալաքբաշով⁹ և ուրիշների¹⁰) աշխատությունների հիմքում¹¹:

* Պրպտուն մտքի տեր այս երիտասարդին հաջողվել է վերականգնել է մինչ օրս խիստ մակերեսայնորեն ուսումնասիրված Շամախիի և ապա Բաքվի նահանգի հայության պատմությունը սկսած ամենավաղ ժամանակներից: Ակնհայտ է դառնում, որ այդ տարածաշրջանում հազարամյակներով բնակված հայությունը (ի հակադրություն ներկա աղբրեջանցիների), պատկանում է Արևելյան Այսրկովկասի հնագույն ժողովուրդների թվին: Գ. Ստեփանյանի փաստերով հիմնավորվող հարցադրումները հայ-աղբրեջանական ներկա պատմաբաղաբական բանավեճը տեղափոխում են «հակառակորդի դաշտը»: Այս խորապատկերի վրա ավելի քան զավեշտական են դառնում Արևելյան Այսրկովկասից հարյուրավոր կիլոմետրերով բաժանվող Լեռնային Ղարաբաղի հանդեպ պաշտոնական Բաքվի նկրտումները: *Խմբ.*

¹ Տե՛ս Խառաշայան-Առաքելյան Դ., Ուղիների ողիսականը 18-20-րդ դդ. (Պատմություն՝, էթնիկ գոյատևում՝, ինքնահաստատում՝), «Հայոց եղեռն. 90», Հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 119:

² Տե՛ս Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960.

³ Буниатов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

⁴ Տե՛ս Мамедова Ф., Историческая география Кавказской Албании (III в. до н.э.-VIII в.н.э.), Баку, 1986; Кавказская Албания и албанцы, Баку, 2005.

⁵ Տե՛ս Мамедов С., Армянские источники об истории Азербайджана и азербайджано-армянских взаимоотношениях в XV-первой половине XVIII вв., автореф. диссерт. на соиск. уч. степ. докт. ист. наук, Баку, 1982.

⁶ Տե՛ս Геюшев Р., Христианство в Кавказской Албании, Баку, 1984.

⁷ Меликов Р., Этническая карта Азербайджана в период ахеменидского владычества (VI-IV вв. до н.э.), Баку, 2003.

⁸ Տե՛ս Сумбатзаде А., Азербайджанцы-этногенез и формирование народа, Баку, 1990.

⁹ Տե՛ս Alakbarli A., Les Monuments d'Azerbaïdjan d'Ouest, Bakou, 2007.

¹⁰ Աղբրեջանական պատմագրության հակազիտական հրապարակումներից այս առումով խիստ առանձնանում է Հեղադր Ալիևի հիմնադրամի և Աղբրեջանական Հանրապետության արտաքին գործոց նախարարության հովանավորությամբ Բաքվում 2007 թ. հրատարակված «Աղբրեջանի դեմ պատերազմը. թիրախն է մշակութային ժառանգությունը» (խմբագիր՝ Քամալա Իմրանլի) լազերային խտասալիկով (CD-ROM) աշխատությունը (տե՛ս Գալջյան Ռ., Աղբրեջանական ձեռագրով. գիրք հայկական մշակութային ինքնության դեմ, «Ազգ», Երևան, 2008, մայիսի 31, N 103):

¹¹ Տե՛ս Карабах. Очерки истории и культуры. Авторский коллектив, под общим ред. А. А. Аббасова, Баку, 2004.

Քիվ 1(26) ապրիլ-հունիս 2009

համառայիկական հանդես

ՎԻՄ 1

Ավելին, Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հակահայկական քարոզչության պայմաններում ներկայումս ադրբեջանական համացանցի կայքէջերը «ողողվել են» նման հակազիտական դրույթներով ու թյուրիմացություններով¹²: Կեղծ աղվանագիտությամբ սքողված այս շինծու հայեցակարգի նպատակն էր ներկայիս ադրբեջանցիներին հորջորջել «նախկին քրիստոնյաներ՝ աղվաններ», նրանց ստեղծած հոգևոր ու նյութական մշակույթի յուրացման ճանապարհով ներկայանալ իբրև աղվանների ժառանգորդներ և վերջիններիս «անունից» յուրացնել բուն հայկական պատմամշակութային ժառանգությունը:

Այսպես, օրինակ՝ Ռ. Գեյուշևը գիտական հանրությանը մոլորեցնող խաբեքայությունների ճանապարհով ժամանակին կատարել է այն «եզրահանգումը», թե իբր «քրիստոնեությունը, ադրբեջանական ժողովրդի պատմության մեջ կազմելով առանձին շրջան, նշանակալից դեր է ունեցել հին ադրբեջանցիների տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում»¹³: Մեզ հասած պատմական աղբյուրները նման եզրակացության համար որևէ հիմք չեն տալիս, քանզի Արևելյան Այսրկովկասի տարածքում, սկսած մ.թ. I դարից՝ քրիստոնեության տարածումից մինչև թյուրքալեզու ցեղերի ներթափանցումը (XI դարը), «հին ադրբեջանցիներ» չեն եղել, առավել ևս՝ թյուրքալեզու ադրբեջանցիները երբեք քրիստոնյաներ չեն եղել: Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ վեճի առարկա չէ այն փաստը, որ «ադրբեջանցի» ինքնանվամբ ժողովրդի կազմավորումն ընթացել է նոր ժամանակներում և աղվանական մետաեթնոսի հետ որևէ կերպ ուղիղ կապ չի ունեցել¹⁴:

Արևելյան Այսրկովկասի հայկական մշակույթը յուրացնելու նկրտումներով հայկական հուշարձանները «աղվանական», իսկ քրիստոնյա «աղվաններին»՝ իրենց նախնիները հայտարարելու «գիտական» տեսակետը, իսկ իրականում՝ քաղաքական հնարքը, փաստորեն թաղվեց հենց Ադրբեջանի իշխանությունների կողմից, երբ պետական մակարդակով 2005 թ. դեկտեմբերին միջնադարյան բարբարոսական մեթոդներով ոչնչացվեցին և հողի երեսից ջնջվեցին մինչ այդ «աղ-

¹² St'u http://www.sakharov-center.ru/azrus/az_sod.htm; <http://www.Analitika.az>; <http://www.bakilil.az>; <http://news.trend.az/>

¹³ Геюшев Р., նշվ. աշխ., սր. 4.

¹⁴ St'u Акопян А., Мурадян П., Юзбашян К., К изучению истории Кавказской Албании (По поводу книги Ф. Мамедовой "Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э.-VIII в. н. э)", ՊԲՀ, Երևան, 1987, N 3, էջ 189: XI-XVII դդ. ողջ ընթացքում Արևելյան Այսրկովկաս ներթափանցած թյուրքալեզու բնակչության տարբեր հատվածներն ու ցեղերը մինչև XX դ. սկզբները կոչվել են տարբեր էթնանուններով՝ փաղառներ, շահսևաններ, ջինլիներ, ջուլանշիրներ, թյուրքեր, թաթարներ, կովկասյան թյուրքեր և այլն (Сысоев В., Тюркское население Азербайджана в XVII веке, Баку, 1926, стр. 3-16), որոնք միասնական էթնոս չեն եղել և չեն հավակնել հավաքական էթնամական, առավել ևս «ադրբեջանցի» էթնիկ անվան: XVIII դ. երկրորդ կեսին երկրամասում ճանապարհորդած գիտնակաները (Ֆրիդրիխ Մարշալ ֆոն Բիբերշտեյն, Սեմյոն Բրոնսկի և ուրիշներ), հետևելով իրենց նախորդող ճանապարհորդներին, իրենց աշխատություններում թյուրքալեզու վերոհիշյալ էթնանունների փոխարեն հաճախակի սկսում են գործածել թաթար անունը (Керимов Э., Из истории этнографического изучения Азербайджана в русской науке (XV-первой четверть XIX в.). Азербайджанский этнографический сборник. Исследования и материалы, вып. I, Баку, 1964, стр. 212-217): XIX դարի երկրորդ կեսին վերաբերող ռուսական վիճակագրական տեղեկագրերում, պաշտոնական փաստաթղթերում ու վավերագրերում «թյուրքեր» և «կովկասյան թյուրքեր» տերմինների կողքին առավել գործածական է դառնում թաթար տերմինը, որն աստիճանաբար դառնում է Ռոսսийской империи по Кавказскому краю, LXV, Бакинская губерния. Список населенных мест по сведениямъ 1859 по 1864 годъ. Сост. глав. ред. ком. Н. Зейдлицемъ, Тифлисъ, 1870 (այսուհետ՝ СМ-1859-1864), стр. 85-89): Արդեն XIX դարի վերջին պաշտոնական գրականությունում տիրապետող է դառնում ավանդականացած թաթար անվանումը: Ս. Պետերբուրգում 1890 թ. լույս տեսած

վանական» հորջորջված հին Ջուղայի միջնադարյան հայկական գերեզմանոցի վերջին խաչքարերը¹⁵:

Ադրբեջանցի կեղծարար-պատմաբանների հրապարակումներում հետևողականորեն քողարկվել է Արևելյան Այսրկովկասում հնուց ի վեր, ինչպես նաև՝ XIX դարում և XX դարի սկզբներին ստվարաթիվ հայության գոյության փաստը: Վերջիններս առաջ են քաշել անգամ այն անհիմն ու զավեշտական թեզը, թե իբր՝ հայերը երկրամասում հաստատվել են ընդամենը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո տեղի ունեցած գաղթի հետևանքով: Հակապատմական այս հայեցակարգը ցայտուն է դրսևորվել հատկապես Ֆ. Մամեդովայի՝ «Աղվանքի քաղաքական պատմությունն ու պատմական աշխարհագրությունը (մ.թ.ա. III-մ.թ.VIII դդ.)» աշխատության մեջ, ուր հեղինակը, առաջնորդվելով փաստերի կեղծման և աղավաղման հստակ նպատակադրումով, գրում է. «Հայերի բնակավայրերը Ադրբեջանի տարածքում հայտնվել են ավելի ուշ շրջանում՝ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին»¹⁶:

Պատմական իրականությունը, սակայն, անհաշտ է իր նկատմամբ մտահայեցողական մոտեցման հետ: Որպես երկրամասի հնաբնակ և մշակութակերտ ժողովուրդ, հայերը հնագույն ժամանակներից մասնակցել են Արևելյան Այսրկովկասի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծել հարուստ պատմություն: Նշանակալից էր հայերի դերը արհեստագործության, գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության, մասնավորապես նավթարդյունաբերության բնագավառում:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Բուն Աղվանքի տարեթնիկ տարածքում վաղնջական ժամանակներից սկսած բնակվել են ոչ միայն աղվա-

«Հանրագիտարանային բառարանում», ի թիվս կայսրության այլ թյուրքական և մահմեդական ժողովուրդների, բաթար է անվանվում նաև Կովկասի թյուրքալեզու բնակչությունը (Энциклопедический словарь, под ред. проф. И. Андреевского, т. XXVIIА, издатели Ф. Брокгауз, И. Ефронь, СПб., 1899, стр. 86): Միայն XX դարի սկզբների վերջիններիս սկսեցին անվանել «այսրկովկասյան բաթարներ», որպեսզի Կազանի և Ղրիմի բաթարներին տարբերակեն Այսրկովկասի բաթարներից (Весь Кавказ. Промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Составил и издал М. С. Шапшович, Баку, 1914, стр. 22), թեպետ սեփական ազգային պատկանելությունը մատնանշելիս Կովկասի մահմեդականներն իրենց հազվադեպ են անվանել բաթար: Նրանց շրջանում առավել գործածական էին թյուրք, կովկասցի կամ մուսուլման ինքնանվանումները: Արևելյան Այսրկովկասում բաթարներին ադրբեջանցի տերմինը փոխարինելու եկավ միայն XX դ. 30-ական թթ. կեսերին, որն առավելապես կապված էր ոչ այնքան նրանց էթնոհամայնքման, որքան քաղաքական գործընթացների հետ, երբ «Ադրբեջան» վարչաքաղաքական անվանը համապատասխանեցվեց «ադրբեջանցի» էթնանունը: Արևելյան Այսրկովկասում թյուրքալեզու ցեղերին երկրի անունով ադրբեջանցիներ կոչելը ժամանակակից էթնիկ իմաստով պաշտոնական, զանգվածային լայն կիրառում ստացավ և վերջնականապես ամրագրվեց 1936 թ. դեկտեմբերի 5-ի ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունումից հետո: Հարկ է նկատել, որ համրահայտ այս իրողությունը չեն ժխտում նաև ադրբեջանցի պատմաբաններից ոմանք: Օրինակ՝ Ա. Լեքսերովը Ադրբեջանի հնագիտության ու ազգագրության հարցերին նվիրված աշխատության մեջ, «Ադրբեջանցիներ» վերտառությամբ գլխում պարզորոշ գրում է. «... այդ անվանումը (ինձ՝ ադրբեջանցի - Գ. Ս.) բնակչության շրջանում լայն կիրառում գտավ միայն 1936 թ. սկսած» (Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, стр. 71). Թեև 1937 թ. հունվարի 6-ին անցկացված համամիութենական մարդահամարի պաշտոնական նյութերում թյուրքալեզու բնակչությունը դեռևս անվանվում էր թյուրք (Всесоюзная перепись населения 1937 г: Краткие итоги, Москва, 1991, стр. 94), Ադրբեջանում թյուրքալեզու բնակչությունը մեկ միասնական՝ «ադրբեջանցի» անվանումով նշված է միայն 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի պաշտոնական նյութերում (Всесоюзная перепись населения 1939 г: Основные итоги, Москва, 1992, стр. 71): Հարցի մանրամասն քննությունը տես Չրբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին»: «Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ», Ա, Երևան, 2006, էջ 33-37, տես նաև Ստեփանյան Գ., Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնանվան գործառնան հարցի շուրջ, «Սերժավոր Արևելք», պր. 5, Երևան, 2008, էջ 137-144:

¹⁵ Stü J. The Annihilation of Armenian Cemetery by Nakhievans Azerbaijani Authorities, Beirut, Lebanon, 2006.

¹⁶ Stü Мамедова Ф., Политическая история..., стр. 40.

նական, այլև իրանական ցեղեր, ինչպես նաև որոշակի հայկական էթնիկ տարր, որն իր ուրույն տեղն ու դերն ուներ երկրամասի էթնոքաղաքական և էթնոմշակութային գործընթացներում¹⁷:

Պատմիչ Եղիշեն հիշատակում է, որ մերձկասայան հյուսիս-արևելյան շրջաններում ռազմական կարևոր նշանակություն ունեցող՝ «Ճորայ պահակի» կամ «Դուռն Հոնացի» պաշտպանությանը մշտապես մասնակցում էին նաև հայ նախարարական տները¹⁸: Ստեփաննոս Օրբելյանի հաղորդմամբ՝ Սյունյաց նախարարական տունը Ճորայ պահակի պաշտպանությանը մասնակցում էր տակավին Տրդատ I արքայի (66-88) ժամանակներից: Պատմիչն ասում է, որ Հայոց Վաղարշակ թագավորը (=Տրդատ I) կարգեց Սիսական տոհմը իբրև առաջին նահապետություն և «երկրորդ թագաւորութեան իւրոյ և ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հոնաց»¹⁹:

Այս իրողությունը փաստել է նաև Ղազար Փարպեցին, որի հաղորդմամբ՝ Վասակ Սյունին Վրաստանի մարզպան նշանակված ժամանակ (439-443) պաշտպանում էր նաև Կովկասյան նշանավոր լեռնանցքը: Ինչպես նշում է ինքը՝ Վասակ Սյունին. «... եւ ես մինչ Վրաց մարզպանն էի և դուռն Աղուանից յիմում ձեռին էր...»²⁰: Ժամանակի պատմաքաղաքական հանգամանքների բերումով, Ճորայ պահակի պաշտպանության նպատակով հայ, մասնավորապես սյունեցի զինվորական և խաղաղ բնակչության հաստատումը էթնիկ բարդ խճանկար ունեցող այս տարածաշրջանում ուժեղացավ հատկապես V-VI դդ.՝ Կասպից ծովի արևմտյան ափի երկարությամբ Պարսկաստանի քաղաքական դիրքերի ամրապնդման շրջանում²¹:

IX դ. արաբ հեղինակ Բալաձորին հաղորդում է, որ Խոսրով I Անուշիրվանը (531-579) իր կառուցած պաշտպանական ամրություններում՝ Շաբիրանում, Մասկատում և Բար ալ-Աբվարում (Դերբենդ) Պարսկաստանից բերված բնակիչների հետ մեկտեղ այդտեղ բնակեցրեց նաև Սյունիքից տեղափոխած բնակչությանը, որին նա կոչում էր Սիյասիջիններ (իմա՝ սիսականներ - Գ. Ս.)²²:

Երկրամասում հայ էթնիկ տարրի վաղեմությունը փաստող ապացույցներից

¹⁷ St'ia Gagemeyer Ю., Хозяйственный очерк Закавказского края (население). Сборник газеты "Кавказ", Тифлиси, 1847, стр. 58, տե՛ս նաև Экономический бытъ государственных крестьянъ Геокчайскаго и Шемахинскаго уездовъ Бакинскои губернии, исследование Н. А. Абелова, "Материалы для изучения экономического быта государственныхъ крестьянъ Закавказскаго края", т. VI, ч. II, Тифлис, 1887, стр. 12, տե՛ս նաև Գալստյան Դ., Գալստյան Ա., էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում, (Գալստյան Դ., Դոկլաժներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Երևան, 2002, էջ 90:

¹⁸ St'ia Gagemeyer Վասն Վարդանայ եւ Գայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Սիմասեան, Երևան, 1957, էջ 43:

¹⁹ Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեանի արքեպիսկոպոսի Սիւնեաց, աշխ. Կարապետ վրդ. Շահնազարեանցի, Փարիզ, 1859, հտ. Ա, էջ 55:

²⁰ Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Գայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Սկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տիֆլիս, 1904, էջ 83:

²¹ Մանրամասն քննությունը տե՛ս Еремян С., Сюния и оборона сасанидами кавказских проходов, Стелёваզիր ՍՍՌԿ ՊԸ հայկական ֆիլիալի, Երևան, 1941, N 7 (12), էջ 33-40: Բարխուդարյան Ա., Ղերբենդի հայ-աղվանական թագավորությունը, ՊԲԶ, Երևան, 1969, N 3, էջ 125-147: Գալստյան Ա., Արևելյան Այսրկովկասում հայկական և իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (Սի խմբի ձևավորման օրինակով), «Մերձավոր Արևելք», պր. Ա, Երևան, 2002, էջ 31-39:

²² St'ia Baladzori, Книга завоевания стран, вып. III, текст и перевод с арабского проф. П. К. Жузе, Баку, 1927, стр. 5, 7, տե՛ս նաև Сведения арабскихъ писателей о Кавказе, Армении и Азербайджане. Ибн-ал-Факихъ, перевод и примечания Н. А. Караулова, Сборник материалов для описания местностей и племень Кавказа, вып. XXXI, Тифлиси, 1902, стр. 23.

բերենք աղբյուրներում պահպանված այլ վկայակոչումներ: Եսայի Հասան-Ջալալյանի հավաստմամբ՝ «Եւ երկիրն էր (Շիրվանը - Գ. Ս.) բարեւի և շէն և մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովորոք յուրվք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականսն... (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»²³:

Իսկ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսն իր հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»²⁴:

Խիստ բնորոշ է նաև Սարգիս արք. Ջալալյանցի՝ հայկական գյուղերի հնարանակության վերաբերյալ վկայակոչումը. «Այտքիկ գիւղօրայք հին են, և բնակիչքն (իմա՝ հայերը - Գ. Ս.) բնիկ շամախեցիք...»²⁵:

Հարցի վրա լույս է սփռում նաև Ներսես Աբելյանի ուսումնասիրությունում տեղ գտած տեղեկությունը, որում ասված է. «Հայերը համարվում են Շիրվանի հին բնակիչների մի մասը: Նրանց այստեղ հայտնվելու ժամանակը վերաբերում է եթե ոչ X-XI դարերին, ապա ամենայն հավանականությամբ շատ ավելի վաղ ժամանակների»²⁶:

Երկրամասում հայերի հնաբնակ լինելը փաստում են նաև ոչ հայկական աղբյուրները: Այս իմաստով, հատկապես ակնառու է ցարական կառավարության պաշտոնյա, կովկասագետ Յու. Գագեմեյստերի բերած տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից, - գրում է նա, - իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուտիները»²⁷:

Ավելորդ չէ հիշատակել նաև կովկասագետ Ն. Ջեյդլիցի հետևյալ ուշագրավ վկայությունը. «Շամախի քաղաքի շրջակայքում սփռված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները»²⁸: Հայկական մի շարք գյուղերի (Վանք, Ավանաշեն, Գանձակ, Խաչմաս, Գիրք, Նորշեն և այլն) տեղանունների հայակերտ լինելը միանգամայն բավարար է երկրամասում հայերի տեղաբնիկ լինելը փաստելու համար:

Աղբրեջանական կեղծարարության՝ փաստերն աղավաղելու նույն եղանակն է կիրառել նաև Գ. Գեյբուլաևը՝ Աղբրեջանի տեղանուններին նվիրված աշխատությունում²⁹: Փորձելով կասկածի տակ դնել երկրամասում հայերի հնաբնակ լինելը, անդրադառնալով մի քանի գյուղերի (Կարմախան, Ջարխու, Քարքանջ, Դարա-Քարքանջ և այլն) անվանաբանության խնդրին, հեղինակը նպատակադիր չիմացությամբ՝ չպարզաբանելով այդ տեղանունների պատմաաշխարհագրական և լեզվաբանական-ստուգաբանական իմաստը, երկրամասում վաղ ժամանակներից հայապատկան գյուղերի գոյության, դրանցում հարյուրավոր հայերեն արձա-

²³ Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 26:

²⁴ Պիւսան հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, հրատարակեց՝ Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 417-418:

²⁵ Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, մասն Բ, Տփլիսիս, 1858, էջ 394:

²⁶ Абелива Н. А., նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 12.

²⁷ Гагемейстер Ю., նշվ. աշխ., стр. 58.

²⁸ CHM-1859-1864, стр. 93.

²⁹ Տե՛ս Գեյбуллаев Г., Топономика Азербайджана, Баку, 1986, стр. 119-120:

նագրություններ ունեցող միջնադարյան եկեղեցիների, խաչքարերի ու մատուռների փաստը քողարկելու անկասելի մոլուցքով հայտարարում է, թե իբր էթնիկ պատկանելիության առումով այդ գյուղերը ադրբեջանական են³⁰:

Մինչդեռ, երկրամասի հայկական որոշ գյուղերի պարսկական կամ թյուրքական անվանումները հիմնականում պայմանավորված էին օտար տիրապետության բացասական ազդեցությամբ, որի հետևանքով նրանցից մի քանիսը ժամանակի ընթացքում կորցրել էին ազգային-ավանդական տեղանունները: Հայկական մի շարք գյուղերի (Վանք, Ավանաշեն, Գանձակ, Խաչմաս, Գիրք, Նորշեն և այլն) տեղանունների հայակերտ լինելը միանգամայն բավարար է երկրամասում հայերի տեղաբնակ լինելը փաստելու համար:

Հարազատ մնալով փաստերն աղավաղելու և նենգափոխելու ադրբեջանական պատմագրության որդեգրած յուրօրինակ «սկզբունքին»՝ ադրբեջանցի մեկ այլ պատմաբան՝ Մ. Նեյմատովան, երկրամասի պատմահնագիտական հուշարձաններին և վիճակի արձանագրություններին նվիրված աշխատությամբ (որի խմբագիրն է իր կեղծարարություններով հայտնի Ջ. Բունիաթովը) շրջանցել և լռության է մատնել երկրամասում հայերեն բազմաբնույթ արձանագրություններ ունեցող միջնադարյան հարյուրավոր խաչքարերի ու տապանաքարերի գոյության փաստը³¹: Եվ դա այն դեպքում, երբ երկրամասի հնավայրերը լի են հայերեն բազմաբնույթ արձանագրություններ ունեցող հարյուրավոր խաչքարերով ու տապանաքարերով, որոնցով հարուստ են հայկական մի շարք հին գյուղերի (Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշեն, Հնդար, Սադիան, Մատրասա և այլն) գերեզմանատները³²: Դա անվիճելիորեն փաստում է երկրամասում հայերի հնաբնակ և մշակութակերտ լինելու հանգամանքը:

Շամախի և Բաքու քաղաքների սոցիալ-տնտեսական, առևտրական հարաբերություններում ու կառուցապատման գործում հայերի ունեցած ծանրակշիռ դերակատարությունը միտումնավոր կերպով լռության քողով է պատվել, կամ էլ ծայրահեղ դեպքում խիստ նվազեցվել ադրբեջանցի այլ հեղինակների՝ Հ. Ջիդդիի³³ և Ս. Աշուրբեյլիի³⁴, Շ. Ֆաթուլահի³⁵, Ա. Սալամզադեի³⁶ և այլոց աշխատություններում: Եվ դա այն դեպքում, երբ ներկայիս Շամախին և մասնավորապես Բաքու քաղաքները զարդարում են հայ ճարտարապետների կողմից (Գ. Տեր-Միքելյան, Հովհ. Քաջազունի, Վ. Սարգսյան, Ն. Բան և շատ ուրիշներ) հայկական ազգային ճարտարապետության ստեղծագործական լավագույն ավանդույթներով կառուցված բազմաթիվ շենքեր:

Պատմական բազմաթիվ տեղեկությունները վկայում են, որ Շամախին միջնա-

³⁰ Տե՛ս նույն տեղում, սր. 120:

³¹ Տե՛ս Нейматова М., Мемориальные памятники Азербайджана XII-XIX века, Баку, 1981; О некоторых эпиграфических памятниках Кубинского, Хачмасского и Кусарского районов, АН АзССР. Труды института истории, т. XIII, Баку, 1958, стр. 305-344.

³² Տե՛ս Чаршайлыյան Ա., Բուն Աղվանքի հայերեն վիճակերը, Երևան, 1997, էջ 4-5:

³³ Джидди Г., Средневековой город Шемаха (IX-XVII века). Историко-археологическое исследование, Баку, 1981.

³⁴ Տե՛ս Ашурбейли С., Очерк истории средневекового Баку (VIII-начало XIX вв.), Баку, 1964.

³⁵ Տե՛ս Фатуллаев Ш., Градостроительство и архитектура Азербайджана XIX-нач. XX века, Ленинград, 1986.

³⁶ Տե՛ս Саламзаде А., Архитектура Азербайджана XVI-XIX вв., Баку, 1964.

դարում ու հետագայում ևս համարվել է երկրամասի հայության կրթական, մշակութային, քաղաքական կյանքի և վաճառականության հիմնական կենտրոնը³⁷, առավել ևս՝ նշված բնագավառներում հայ բնակչության դերի հետագա բարձրացման շնորհիվ հայ շրջանակներում այն դիտվել է իբրև հայկական քաղաք:

Եվրոպացի միջնադարյան ճանապարհորդները ուշագրավ տվյալներ են թողել Շամախիի հայ բնակչության վերաբերյալ: XV դարի երկրորդ կեսի իտալացի դիվանագետ, ճանապարհորդ ու վաճառական Ջոզեֆո Բարբարոն, որը 1471-1473 թթ. եղել է Վենետիկի դեսպանը Պարսկաստանի այդ ժամանակվա տիրակալ Ալկոյունլու Ուզուն-Հասանի արքունիքում, Վենետիկ վերադառնալու ճանապարհին Թավրիզից հետո լինում է նաև Շամախիում և Դերբենդում: Նկարագրելով Շամախի քաղաքը՝ նա գրում է. «...Շամախի ... Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտավ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով...եւ բնակիչների մեծ մասը հայ են»³⁸:

Ուշագրավ է նաև անգլիացի ճանապարհորդ ու վաճառական Ա. Ջենքինսոնի Շամախի՝ 1563 թ. ապրիլի 10-ին եղած ժամանակ կատարած գրառումներից հետևյալ հատվածը. «... այս քաղաքը ծովից (Կասպից - Գ. Ս.) ուղտով յոթը օրվան ճանապարհի հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակեցված գլխավորապես հայերից... (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»³⁹:

Շամախահայերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել Պարսկաստան ուղևորվելու ճանապարհին 1636 թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1637 թ. մարտի 27-ը Շամախիում հանգրվանած Սաքսոնիայի թագավոր Ֆրիդրիխ Շլեզվիգ-Հոլշտինացու դեսպանության քարտուղար Ադամ Օլեարիուսը: Նրա հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Շամախին այդ շրջանում ուներ 5000 տուն ազգաբնակչություն: Ուշագրավ է Շամախիի հայ բնակչության վերաբերյալ Ա. Օլեարիուսի հետևյալ վկայությունը: Նա գրում է, որ Շամախիում եղած ժամանակ խանը ցուցադրել էր ավելի քան 2000 մարդուց բաղկացած իր հետևակը, որի մեծագույն մասը հայեր էին⁴⁰:

Շամախահայերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել նաև 1780-ական թթ. սկզբներին երկրամաս այցելած ֆրանսիացի ուղեգիր Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սովրեֆը: Նա գրում է, որ «Շամախիում բնակվում էին շատ հայեր»⁴¹:

³⁷ Տե՛ս Петрушевский И., Население Азербайджана в XV веке: Сборник статей по истории Азербайджана вып. I, Баку, 1949, стр. 186. Շամախին ծննդավայր է հայ մեծանուն մի շարք մտավորականների: Այդտեղ են ծնվել երեք քույրերի գավակներ Ալ. Շիրվանզադեն, Կոստան Ջարյանը և Դովհանես Աբեյյանը, գրականագետ, դրամատուրգ և թարգմանիչ, Լայպցիգի համալսարանը փիլիսոփայության դոկտորի աստիճանով ավարտած Սեդրակ Թառայանը, բանաստեղծ, արձակագիր Վահան Գալֆայանը, գեղեցկատես դերասանուհի Եվգինե Սեբարը (հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Մակինցյանի կինը, որը 1927 թ. Փարիզում հաղթող է ճանաչվել աշխարհի տարբեր երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Դունաստան, Թուրքիա) միջև գեղեցկուհի կինոդերասանուհու համար կայացած մրցույթում (տե՛ս Եվգինե Սեբար, Զարազատ անուններ, Երևան, 1970, էջ 94-95) և շատ ուրիշ նշանավոր գործիչներ:

³⁸ Զակրբյան Դովհ., Ուղեգրություններ, Աղբյուրներ Զայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր, Երևան, 1932, էջ 199:

³⁹ Նույն տեղում, էջ 372:

⁴⁰ Տե՛ս Подобное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633,1636 и 1639 годах, составленное секретарем посольства Адамам Олеарием, перевод съ немецкаго П. Барсовъ, Москва, 1870, стр. 526, 553.

⁴¹ L. F. Ferrières – Sauvebef, Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières – Sauvebef, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789, Tome première (t. 1), Maestricht, 1790, p. 228.

Ոչ միայն Շամախիում, այլև նավթառատ Ապշերոնյան թերակղզում ևս, հայերը բնակություն են հաստատել առնվազն վաղ միջնադարից և ունեցել են իրենց պաշտամունքային օջախները, բայց պահպանված առավել հին պատմական հուշարձանները վերաբերում են միայն XII-XV դդ.⁴²: Ապշերոնյան թերակղզում հայաբնակ գյուղեր էին Բուզովնան⁴³, Սաբունջին⁴⁴, Շաղանը, Մաշթաղան, Բալախանին և Մարդաքյանը⁴⁵:

1842 թ. օգոստոսին Բաքու այցելած պրոֆ. Ի. Բերեզինը գրում է, որ Բաքվի շրջակայքում նախկինում շատ գյուղեր բնակեցված են եղել հայերով, սակայն պարսկական տիրապետության հայահալած քաղաքականության հետևանքով հայերը լքել էին իրենց բնակավայրերը և կենտրոնացել Բաքվում, իսկ դատարկված բնակավայրերը գրավել էին մահմեդականները⁴⁶:

Իսկ Գրիգոր Արծրունու «Մշակին» հղած թղթակցության մեջ Ալ. Քալանթարը գրում էր, որ վերոնշյալ գյուղերը 180-200 տարի սրանից առաջ բնակեցված են եղել հայերով: Հողավճագիրը տեղեկություններ էր հաղորդում նաև Բալախանի և Բուզովնա գյուղերի անհետացած եկեղեցիների և այդ տարածքում հանդիպող հայկական զանազան գերեզմանաքարերի մասին⁴⁷:

Թերակղզու հայաբնակ բնակավայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում V դարից ի վեր հիշատակվող Բաքու քաղաքը⁴⁸: Բաք-

⁴² Տե՛ս Տեր-Յովհաննիսեանց Եր., Ս. Եղիայի վանքը Բուզովնում, «Արարատ», 1902, մայիս-հունիս, էջ 481-487: Ապշերոնյան թերակղզում վաղ քրիստոնեական մշակույթի հետքերի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև «Մեղու Ղայաստանի» լրագիրը, ըստ որի՝ Բաքվից 4 վերստ հարավ-արևմուտք գտնվող Բրբի-Ղեյբաթ ուխտատեղիում նախկինում եղել է «Քառասուն հայ կուսանաց» վանքը. «... Քառասուն հայ կուսանաց վանք է եղել յիշեալ ուխտատեղին, այժմ՝ թուրքերն են տիրում թէ ուխտատեղին, թէ նրա նաւթով լի հողերին» («Մեղու Ղայաստանի», Թիֆլիս, 1883, փետրվարի 23, N 18):

⁴³ Բուզովնա գյուղում բնակվող հայերի և նրանց սրբատեղիների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ի. Բերեզինը, որը հիշատակում է Սբ. Գովհաննեսի և Անդրեասի դամբարանի, դրա վրա եղած հայատառ արձանագրությունների մասին (Березин И., Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1850, стр. 270). Ի. Բերեզինի նկարագրությունը շատ առումներով համապատասխանում է ավելի ուշ շրջանում հնավայրում եղած այլ եղիմակների թողած տեղեկություններին: Այս առումով հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում XX դ. սկզբին «Արարատ» ամսագրում հրատարակված «Ս. Եղիայի վանքը Բուզովնում» հոդվածը: Գողվածագիր Եր. Տեր-Յովհաննիսյանցը, լինելով Բուզովնայում, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայերին վերաբերող վիճաբանական նյութի պատահիկների մասին: Ըստ նրա՝ «Բուզովնան, որ մի ժամանակ հայի գիւղ է եղել, ներկայումս ծառայում է Բազուեցուց համար իբրև ամարանոց...» (Տեր-Յովհաննիսեանց Եր., նշվ. աշխ., էջ 482):

⁴⁴ Սաբունջի գյուղը 1886 թ. ընտանեկան ցուցակներում հիշատակվում էր նաև «Արմանի բուլաղ» (Հայկական աղբյուր) անվամբ (Сводъ статистическихъ данных о населении Закавказскаго края, извлеченныхъ изъ посемейныхъ списковъ 1886 г., Бакинской губерния, Тифлиси, 1893 (6. с.), տե՛ս նաև Миллер Б., Таты, их расселение и говоры (материалы и вопросы), "Известия общества обследования и изучения Азербайджана", N 8, вып. VII, Баку, 1929, стр. 13.

⁴⁵ Տե՛ս Կարապետյան Ս., Հայերն Ապշերոնյան թերակղզում, «Առավոտ», Երևան, 1997, օգոստոսի 9, N 79:

⁴⁶ Տե՛ս Березин И., նշվ. աշխ., 4 II, гл. IV (От Кубы до Баку), стр. 41.

⁴⁷ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, N 37:

⁴⁸ Պատմությունն ավանդում է, որ Հայոց Արևելից կողմանց Վաչագան Բ Բարեպաշտ Արշակունի (485-510/23) թագավորը, երբ Կասպե-Փայտակարան նահանգի Բագավան գավառը 500 թ. իբրև օժիտ տվեց իր դստերը՝ Վարսենիկին, Բաքուն նրա ձմեռանոցն էր, իսկ ամառանոցը՝ Շամախին (Հանրամատչելի հանրագիտական բառարան, հտ. Ա, կազմեց՝ Գ. Առաքելեան, Թիֆլիս, 1915, էջ 199): Ինչպես գրում է Ս. Էփրիկյանը՝ «Այս կրակոտ երկիրը (ինձ՝ Բագավան գավառը - Գ. Ա.), Քրիստոսի 500 թուին Աղուանից Վաչագան թագավորը, որ կը մատեր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր էր իւր Վարսենիկ դստեր, որոյ ձմերոցը Բագուն էր, իսկ ամարանոցը Շամախին» (Էփրիկեան Ս., Պատկերազարդ Բնաշխարհիկ բառարան, հտ. Ա, գիրք Ա, Վեներտիկ-Ս. Ղազար, 1903-1905, էջ 362): Ավանդության համաձայն՝ Բաքվում առաջներում եղել է կրակի և ծովի աստվածների բազիլը (Բուհիսթյան Ն., Կրակապաշտների տաճարը Սուրախանիում, Երևան, 1926, էջ 3-4): Եղիշա առաքյալը Աղվանից աշխարհ գալով՝ կործանել է այն և տեղը կանգնեցրել Քրիստոսի խաչը: Մետրոպ Մաշտոցը այդտեղ մատուռ է շինել, իսկ Վաչագան Բ Բարեպաշտը 500 թ. մատուռի տեղում կառուցել էր եկեղեցի. «Իսկ Վաչագան բարեպաշտ թագաւորն Աղուանից յայնի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այսմ և Բագուայ հին և նշանաւոր եկեղեցին...» (Սմբատեանց Ս., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախուոյ թեմի, Տիֆլիս, 1896, էջ 373):

վի շրջակայքում հոծ հայկական համայնքների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում XIV-XV դդ. տեղացի աշխարհագրագետ և ճանապարհորդ Աբդ աբ-Ռաշիդ ալ Բաքուվին՝ ավանդաբար նրանց կոչելով քրիստոնյաներ: «Բաքույա քաղաքի մերձակայքը, - գրում է Բաքուվին, - բազմաբնակավայր է և յուրաքանչ-յուրն ունի ամրացված միջնաբերդ ամրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոնյաներ են (իմա՝ հայեր - Գ. Ս.)...»⁴⁹:

Վերջին շրջանում էս աղբրեջանական պատմագրությունը մեծ տեղ է հատկացնում Բաքվի նահանգի XIX-XX դդ. էթնոժողովրդագրության հիմնահարցերին: Հետապնդելով պատմական իրականության հետ կապ չունեցող քաղաքական նպատակներ, աղբրեջանցի «ժողովրդագիրների» հրապարակումները լի են թերի հաշվառումներով և խիստ աղավաղված ցուցանիշներով, որոնք մեկնաբանվում են ազգայնական դիրքերից: Ավելին, նրանք չեն խորշում անգամ միտումնավոր կերպով կեղծել պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում նահանգի էթնոժողովրդագրական պատկերին վերաբերող նյութերը: Հարկ է հիշատակել հատկապես Տ. Ալիխանովայի աշխատությունը⁵⁰: Սահմանափակվենք միայն մեկ-երկու վկայակոչումներով: Տ. Ալիխանովան «Աղբրեջանի ազգային և էթնիկ փոքրամասնությունները XX դ.» ուսումնասիրության մեջ աղյուսակի տեսքով տալով երկրամասի ժողովուրդների՝ 1897-1999 թթ. շարժը և անտեսելով այն հանգամանքը, որ մահմեդական կրոնին պատկանող դըրդզները, բաշկիրները, չուվաշները, կումիկները, թյուրքերն ու թաթարները 1897 թ. մարդահամարի նյութերում նշված են «թուրք-թաթարներ» անունը կրող սյունակում, վերը նշված էթնիկ խմբերը և նրանց թվաճը հանիրավի կերպով նշել է մարդահամարի հարցաթերթիկներում և սյունակներում ընդհանրապես բացակայող «աղբրեջանցի» էթնանվան տակ: Միանգամայն անընդունելի պետք է համարել հեղինակի կողմից XIX դարավերջին «աղբրեջանցի» հասկացողությունը օգտագործելու նորամուծությունը: Այս նույն հիմունքներով Տ. Ալիխանովայի կողմից կազմված աղյուսակում աղավաղվել են նաև հայերին և այլ ազգություններին (լեզգիներ, թաթեր, թալիշներ և այլն) վերաբերող պաշտոնական վիճակագրական նյութերը⁵¹:

Բաքվի նահանգի հայ բնակչության՝ XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբների պատմաժողովրդագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում հայ ազգաբնակչությունը ազգային դիմապատկեր ունեցող խոշոր և առաջատար ազգություններից մեկն էր: Բաքվի նահանգի հայկական բնակավայրերի տեղաբաշխման և ժողովրդագրական գործընթացների վերլուծությունը ապացուցում է, որ Արևելյան Այսրկովկասի հնագույն հայ ազգաբնակչությունը հիմնականում կենտրոնացած էր Գյոքչայի, Շամախու, մասամբ նաև՝ Դուբայի և Լեն - քորանի գավառներում: Եվ այդ բնաշխարհիկ հայության առկայությունը ամենևին էլ կապված չէր 19-րդ դարի երկրորդ կեսին, մանավանդ՝ դարավերջին Բաքվի նավթա - րդյունաբերության զարգացմամբ պայմանավորված՝ հայերի ներհոսքի հետ:

⁴⁹ Абд ар-Рашид ал-Бакуви, Книга тахлис ал-асар ваджлиб ал малик ал Каххар, Москва, 1971, стр. 89-90.

⁵⁰ Алиханова Т., Национальные и этнические меньшинства Азербайджана в XX веке, Археология (IV) и этнология (III) Кавказа (международная научная конференция). Сборник кратких содержания докладов, Тбилиси, 2002.

⁵¹ Նույն տեղում, էջ 197-199:

Այդ պատճառով, եթե նախապես հայահոծ խոշոր կենտրոններն էին Շամախի քաղաքն իր հարակից գյուղերով, ապա XIX դարի 60-ական թվականներից նաև Բաքուն՝ կապված նավթարդյունաբերության բուռն զարգացման հետ: Բաքվի նահանգում հայ բնակչության թվաքանակը և շարժը 1863-1916 թթ. ընկած ժամանակահատվածում, համաձայն պաշտոնական վիճակագրության, ուներ հետևյալ պատկերը⁵².

N	Բնակավայր	1863 Բնակիչ	1873 Բնակիչ	1886 Բնակիչ	1897 Բնակիչ	1914 Բնակիչ	1916 Բնակիչ
1	Բաքվի գավառ	-	747	24.490	22.583	69.984	77.198
2	Շամախու -II-	8735	14.838	15.864	14.283	21.996	22.350
3	Գյոքչայի -II-	9698	10.567	12.979	12.994	17.365	17.207
4	Լենքորանի -II-	-	232	273	483	1507	836
5	Ղուբայի -II-	528	743	1684	1191	1673	1512
6	Ջավաթի -II-	-	-	-	699	1001	984
	Ընդամենը	18.961	27.127	55.290	52.233	113.526	120.087

Աղյուսակը ցույց է տալիս, որ Ադրբեջանի պաշտոնական շրջանակների և նրանց քաղաքական պատվերները կատարող՝ Արևելյան Այսրկովկասի պատմության ադրբեջանցի կեղծարարների հարցադրումներն ու եզրակացությունները հենու են իրականությունից: Նրանք խեղաթյուրում են պատմական փաստերը, ծուռ հայելու մեջ են ներկայացնում իրականությունը և միտված են տարածաշրջանի ժողովուրդների պատմա-մշակութային ժառանգության յուրացմանը:

Այսպիսով, մատենագրական, վիճագիր և վավերագրային աղբյուրների վկայությամբ՝ Արևելյան Այսրկովկասում հայ բնակչությունն ապրել է վաղնջական ժամանակներից և երկրամասը հայության համար համարվել է բնօրրան, որտեղ դարեր ի վեր նա կերտել է իր պատմությունը: Արևելյան Այսրկովկասում հայերի՝ մաքառումներով և հերոսապատումներով լի պատմությունը վերջնականապես ավարտվեց, երբ Բաքվում 1990 թ. հունվարին տեղի ունեցած ջարդերին հաջորդեց Ադրբեջանից շուրջ 400.000 հայերի վերջին հատվածի բռնագաղթը:

⁵² Աղյուսակը կազմված է ըստ ՇՄ-1859-1864, թր. 78, Список населенныхъ местъ по сведениямъ 1873 г., Бакинская губерния. Составленъ главнымъ редакторомъ комитета Н. Зейдлицемъ, Тифлисъ, 1879, (б. с.), ССДНЗКИПС-1886, Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI. Бакинская губерния. под редакцией Н. А. Тройницкаго, СПб., 1905, т. 61, таблица XIII, стр. 53, Кавказский календарь на 1915 г., Тифлисъ, 1914, стр. 219, 223, Кавказский календарь на 1916 г., Тифлисъ, 1917, стр. 179,183. Տվյալների հաշվարկը մերն է:

Summary

AGAINST AZERBAIJANI FALSIFIERS OF THE HISTORY OF THE EASTERN TRANSCAUCASUS

Gevorg S. Stepanyan

Literary, lithographic and documentary sources witness that the Armenian population had been living in Eastern Ciscaucasus since antiquity and that that territory was considered to be within the sphere of the influence of Armenian civilization. With the efforts of the Caucasian Tatars, heirs of the Turk-Oghuz, and the Turkish army who came to their aid, contemporary historians of the Azerbaijani state, which had been created only in 1918, over the last several decades, when reflecting upon the history of the left bank of the Kur River of “Bun Aghvank” and Shirvan, have “created” the ancient and medieval history, which has nothing to do with reality; a fable of an Aghvan-Azerbaijani-Turkish heritage.

Azerbaijani historiography has thoroughly distorted the roots of the ethnic formation of its own people – with the “excuse” of finding “Azerbaijanis,” “Azerbaijani tribes,” or the “Azerbaijani race” they have appropriated the ethnic-cultural and political history of the Eastern Ciscaucasus peoples – the Armenians, the Lezgis, the Tatars and others.

The objective of this artificial notion, is to appropriate the created spiritual and material culture of the indigenous people of the territory and by doing so present themselves as an ancient people.